Հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի
պատասխաններ՝ 10-րդ դասարան

1. Թուխպ, հուժկու, միմյանց, հեծկլտալ, խոնարհվել, հողմակոծ, խրոխտ, ընդդիմանալ, հոծ, խախտել, հանապազօրյա, կաղկանձել, քրթմնջալ, կցկտուր, մրթմրթալ, որևէ, խցկվել, որևիցե, ճեղք, կծկվել, խառնիճաղանջ, պչրանք, ապշած, վրդովմունք, ճիգ, ժայթքել, խեղդող, կարեվեր, պղտոր:

2. Մրրկահողմը խելագար մռնչում էր՝ բարձրացնելով ավազախառն փոշու՝ օդի մեջ գալարվող հսկա սյուներ: Հորիզոնը՝ պարուրված մուգ դեղնավուն մռայլով, հետզհետե խոժոռվում էր՝ ծածկվելով թու-պերով: Փոթորկի հու-կու հոսանքի ներքո միմ-նց ամուր փաթաթված բաղեղներն ու երփնաթույր ծաղիկները կարծես խոր հառաչ էին արձակում, դառնագին հե-կլտալով՝ խոնար-վում գետնին, ապա դժվարությամբ փորձում շտկել հողմակ-ծ գլուխները. մինչև իսկ սրաթռիչ արծիվը՝ լուրթ բարձունքների խրո-տ տիրակալը, անզոր էր ըն-իմանալու զայրացած տարրի մռնչուն ալիքներին: 8/11

Այնինչ մոլեգին տարերքը սրընթաց շարժվում էր դեպի հ-ծ անտառը՝ խա-տելով բնակիչների հանապազ-րյա հանգիստը: Ոլորապտույտ հողմի ահեղ սուլոցից շիկամազ սկյուռները թաքնվում էին իրենց փչակների խորքերում, գայլերը՝ աղիողորմ կա-կանձում, քնաթաթախ արջերը քր-մնջում էին՝ կ-կտուր մ-թմ-թալով, և բնության տարերային իրարանցումից սահմռկած՝ ամենքը՝ կենդանի թե թռչուն, թաքնվելու որև- խորշ, խ-կվելու որևից- ճե-ք էր փնտրում՝ այնտեղ կ-կվելու և պատսպարվելու համար:13/11

Ընդհանուր խառնիճաղան-ությունից անմասն չէր նաև Արաքսը՝ անդորր օրերին այնպե՛ս պ-րանքով հոսող մայր գետը: Թվում էր՝ ա-շած և խորին վր-ովմունքով ճի- է անում, որ դուրս ժայ-քի խեղ-ող ափերից՝ տեսնելու՝ ինչ է կատարվում զմրուխտ կանաչությամբ ծածկված Իշխանաց կղզում: Իսկ կղզին, սարսափած բնության կար-եր խռովքից, դողում էր. չէ՞ որ կարող էր կուլ գնալ ահագնացող պ-տոր ջրերին: 9/8

3. պատատուկ-**բաղեղ**, գժդմնել-**խոժոռվել,** մառախուղ-**թուխպ**, լաջվարդ-**լուրթ,** հանդուգն-**խրոխտ**, խոռոչ-**խորշ**, սեթևեթանք-**պչրանք**, ընդհատ-**կցկտուր**, տրտնջալ-**քրթմնջալ,** ուժգին-**հուժկու**, **կարեվեր**, բխել-**ժայթքել**, սրտաճմլիկ-**աղիողորմ,** մրրկածեծ-**հողմակոծ,** սպրդել-**խցկվել**, ծերպ-**ճեղք**

4. տարուց տարի, նորզելանդական, մի երկու, բառգիրք, դեմ դիմաց, ուս ուսի, թերի բարձրագույն, կազմ-պատրաստ, գնալ հասնել, քաջառողջություն:

5. **շանթահարել**- 1.կայծակնահար անել, 2.փխբ. մահացու հարվածել, խոցել, 3. փխբ. շեշտակի՝ ծակող հայացքով նայել, 4. փխբ. սաստիկ հուզել, մեծ վիշտ՝ ցավ պատճառել, 5.փխբ. խիստ խոսքով վիրավորել՝ խոցել:

6. առ-առաջին, առհավետ- հոգեառ, առևտուր,
ամենաբարի, ամենաշատ- ամենագետ, ամենուր,
հակ-հակադիր, հակընդդեմ- կամետ, հակում,
դեր-դերբայ, դերանուն-դերուսույց, դերասան
վեր-վերադարձ, վերհիշել- վերին, վերնախավ
ստոր- ստորադաս, ստորակետ- ստորին, ստորություն, ստորացուցիչ
որդ- լողորդ, քառորդ-երիզորդ, անձրևորդ
բար-հերոսաբար, գրաբար- բարիք, բարունակ
շար-շարահյուսել, շարադրել-շարան, շարական, շարք
ակ- տնակ, հոգյակ- խաժակ, սևակ

Գնահատման չափանիշներ -10-րդ դասարան

Հարց 1.Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
Հարց 2. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
Հարց 3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
Հարց 4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
Հարց 5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
Հարց 6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
Հարց 7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,25 միավոր:

2-րդ առաջադրանքից սկսած՝ ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1, կետադրականի համար 0,5 միավոր, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար՝ 0,25 միավոր: